ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> ----Հունիս----2025թ. N ՄՈ/542 -Ա

ք. Արմավիր

«ԱԼԱՇԿԵՐՏԻ ՀՔ ՔՈՉԱՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԱՌՆԻԿ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆԱԻՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-ին մասով և 3-րդ մասով, հիմք ընդունելով «Ալաշկերտի ՀՔ Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի 2025 թվականի մայիսի 19-ի N68 գրությունը և Արմավիրի մարզի զինվորական կոմիսարի ծանուցագիրը, քսանհինգօրյա վարժական հավաքներին մասնակցելու նպատակով.

ո ր ո շ ու մ եմ՝

1. «Ալաշկերտի ՀՔ Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Գառնիկ Անտոնյանին 2025 թվականի մայիսի 20-ից հունիսի 13-ը ներառյալ ժամանակավորապես ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով աշխատատեղը (պաշտոնը):
2. «Ալաշկերտի ՀՔ Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ժամանակահատվածում պարտականությունների կատարումը 2025 թվականի մայիսի 20-ից հունիսի 13-ը ներառյալ վերապահել «Ալաշկերտի ՀՔ Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Նաիրա Բաղդասարյանին:
3. 2025 թվականի մայիսի 20-ից հունիսի 13-ը ներառյալ «Ալաշկերտի ՀՔ Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Նաիրա Բաղդասարյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ «ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ 04447253

2025-05-19 16:00:58 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ